Մ-80

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ԳԱՅԱՆԵ ՍԵՐԳԵՅԻ

ՀՐՈՎԱՐՏԱԿ - ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ՈՐՊԵՍ ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐ

Է. 00.05. - «Պատմագրություն, աղբյուրագիտություն»
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ն. Հ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ. ԺԱՄԿՈՉՅԱՆ Հ. Ս.

պ. գ. թ. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ Վ. Ա.

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թ. հուլիս 8-ին՝ ժամը 13:00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող՝ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդում: Հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող., 24/4:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. հունիսի 3-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
պատմական գիտությունների թեկնածու ՄԱՐԳԱՐՅԱՆ Գ. Ա.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ատենախոսությունը նվիրված է Արաբական խալիֆայության կողմից նվաճված երկրների բնակչությանը տրված հրովարտակ-պայմանագրերին, որոնցով կարգավորվում էին մուսուլման նվաճողների փոխհարաբերությունները այլակրոն բնակչության հետ: Ուշադրության են արժանացել հատկապես այն պայմանագրերը, որոնք, ըստ հայկական միջնադարյան պատմական ավանդության, տրվել են հայ և քրիստոնյա այլ համայնքներին իսլամի հիմնադիր Մուհամմադի ու նրա հաջորդների կողմից: Այդ պայմանագրերը հայ մատենագրության մեջ հայտնի են որպես «Ալի Մանշուր» (հրովարտակ) ու միտված են եղել պահպանելու և հաստատելու քրիստոնյա համայնքների էթնիկական ու եկեղեցական իրավունքները:

Աշխատանքում հաջորդաբար ուսումնասիրվել են Մուհամմադ մարգարեի՝ քրիստոնյաների նկատմամբ վերաբերմունքը, դաշնագրերը՝ որպես հայ-արաբական հարաբերությունների հիշարժան աղբյուրներ և առաջին չորս արդարադատ խալիֆաների օրոք նվաճված երկրների բնակչությանը տրված պայմանագրերը: Այդ համապատկերում ուսումնասիրվել են Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի՝ սույն թեմային վերաբերող արաբերեն, պարսկերեն ձեռագրերը և դրանց հայերեն թարգմանությունները՝ որպես հայ-արաբական միջնադարյան հարաբերություններն արտացոլող փաստեր: Ուստի սույն աշխատանքը՝ հիմնված արաբատառ ձեռագրերի նյութի վրա, կարող է նշանակալի դեր ունենալ հայ-արաբական հարաբերությունների այս կամ այն շրջանը լուսաբանելու գործում: Այժմ, երբ Հայաստանը դարձել է անկախ պետություն, և միջպետական հարաբերություններ են հաստատվել Հայաստանի ու արաբական երկրների միջև, կենսական անհրաժեշտություն է դառնում հայ-արաբական հարաբերությունների հիմքում ընկած այս հրովարտակ-պայմանագրերի ուսումնասիրությունը: Դրանք կօգնեն արժևորելու և նորովի գնահատելու այդ հարաբերությունները:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակը վաղ շրջանի հայ-արաբական հարաբերությունների կարևոր աղբյուր հանդիսացող հրովարտակ-պայմանագրերի հանգամանալից ուսումնասիրությունն է:

Ատենախոսության խնդիրներն են հայկական և օտար աղբյուրների ու մասնագիտական գրականության մանրազնին ուսումնասիրությամբ՝

- քննել և վեր հանել մուհամմադյան դաշնագրերի ստեղծման հիմնական շարժառիթներն ու պատճառները,
- ուսումնասիրել և արժևորել վերոհիշյալ պայմանագրերի դերն ու նշանակությունը մուսուլմանական տիրապետության տակ գտնվող հայկական համայնքների կյանքում,
- համակողմանի քննության ենթարկել այդ դաշնագրերի պայմանները՝

դրանք զուգահեռադրելով Մուհամմադի՝ Արաբական թերակղզու բնակչությանը տրված պայմանագրերի, արաբական արշավանքների ընթացքում նվաճված քրիստոնյա և այլակրոն բնակչությանը տրված պայմանագրերի պայմաններին:

Ատենախոսության գիտական նորույթը: Թեև բավականաչափ ուսումնասիրված են մուսուլման զորահրամանատարների ու նվաճված երկրների բնակչության միջև կնքված պայմանագրերը, այնուամենայնիվ «Ալի մանշուրները»՝ որպես Մուհամմադի և նրան հաջորդող խալիֆաների կողմից քրիստոնյա բնակչությանը տրված դաշնագրեր, դեռևս չեն դարձել համակողմանի ուսումնասիրության նյութ ու չեն համակարգվել: Խնդրո առարկան պարզապես համառոտ անդրադարձներ է ստացել առանձին հոդվածներում, որոնց մեջ մատնանշվել են այդ պայմանագրերի ստեղծման շարժառիթներն ու լուսաբանվել նրանց բովանդակությունը: Հատկապես պետք է նշել Հ. Անասյանի[1], Հ. Փափազյանի[2] և Ա. Տեր-Ղևոնդյանի[3] աշխատությունները, որոնք բացառիկ վաստակ ունեն այդ պայմանագրերը գիտական շրջանառության մեջ դնելու գործում: Այդ տեսակետից հիշատակելի են նաև պրոֆ. Ն. Հովհաննիսյանի՝ իսլամի վերաբերյալ արված հետաքրքիր դիտարկումները[4]:

Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ աղբյուրագիտական հարուստ փաստերով առաջին անգամ համալիր քննության է առնվել «Ալի Մանշուրի» ֆենոմենը՝ որպես հայ-մուսուլմանական հարաբերությունները կարգավորող կարևոր գործոն, և նրա զարգացման ընթացքը: Գիտական շրջանառության մեջ է դրվել նաև «Մուհամմադ մարգարեի պայմանագիրը» արաբերեն ձեռագրի թարգմանությունը, որն ատենախոսության մեջ զետեղված է հավելվածի տեսքով:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները:

Ժամանակագրական առումով ատենախոսության հիմնական նյութն ընդգրկում է 7-րդ դարի 2-րդ կեսից մինչև 12-րդ դարն ընկած ժամանակահատվածը: Անդրադարձ է կատարվել նաև հետագա դարերին (մինչև 19-րդ դարը), երբ հայ ժողովուրդը, գտնվելով մուսուլման տարբեր նվաճողների տիրապետության տակ, ձգտում էր Մուհամմադ մարգարեի անունը կրող փաստաթղթերով դույզն-ինչ տանելի դարձնել իր վիճակը և նոր արտոնություններ ձեռք բերել մուսուլման իշխողներից:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսությունը շարադրված է հայկական և օտար, հիմնականում արաբերեն սկզբնաղբյուրների համադիր քննության, թեմային առնչվող մասնագիտական գրականության, ինչպես նաև պատմական փաստերի քննական ու պատմահամեմատական վերլուծության սկզբունքի կիրառմամբ:

Աշխատանքի կիրառական նշանակությունը: Ատենախոսության գործնական նշանակությունն այն է, որ առաջ քաշված դրույթները կարող են գործածվել ոլորտի հետազոտողների կողմից գիտական աշխատանքներում, ուղեցույց դառնալ ուսումնամեթոդական ձեռնարկների մշակման համար: Հետազոտությունը կարող է պրակտիկ հետաքրքրություն ներկայացնել նաև աղբյուրագետների, արևելագետների և ընդհանրապես հայ-արաբական հարաբերություններով զբաղվող մասնագետների համար:

Ուսումնասիրության փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը: Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են ՀՀ գիտական հանդեսներում և ժողովածուներում տպագրված գիտական վեց հոդվածներում:

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արևելյան աղբյուրագիտության և պատմագրության բաժնի կողմից:

Սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսություն:

Ատենախոսության մեջ օգտագործվել են մուսուլմանական կարևոր աղբյուրների արաբերեն բնագրերը, առանձին դեպքերում՝ արաբերեն բնագրերից կատարված հայերեն և օտարալեզու թարգմանությունները: Մուհամմադ մարգարեի վերաբերմունքը հրեաների և քրիստոնյաների նկատմամբ առավել հավաստի համատեքստում տեսնելու համար օգտագործվել է նաև Ղուրանը: Օգտագործվել են նաև Ի. Կրաչկովսկու գիտական, Ա. Ամիրխանյանցի կողմից Ղուրանի արաբական կոդիֆիկացված բնագրին ամենից ավելի հարազատ և համարժեք թարգմանությունները[5]: Աշխատանքի աղբյուրագիտական հենքն են հանդիսացել 8-10-րդ դարերի մուսուլման պատմագիրներ ալ-Բալազուրիի[6], Իբն ալ-Խայատի[7], Իբն ալ-Քուֆիի[8] ալ-

---

[1] Անասեան Յ., Մանր երկեր, Լոս Անջելես, 1987, էջ 627-632:

[2] Փափազյան Հ., Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտակներ, պրակ Ա (ԺԵ-ԺԶ դարեր), Երևան, 1956, էջ 97-101:

[3] Տեր-Ղևոնդյան Ա., Հայ նախարարների հողատիրական իրավունքները VII-IX դարերում, ըստ խալիֆայության պայմանագրերի, Հոդվածների ժողովածու, ԵՊՀ, 2003, էջ 294:

[4] Հովհաննիսյան Ն., Մերձավոր Արևելքի և Սիրիայի հայ համայնքները և նրանց հեռանկարները, Երևան, 2015, էջ 52, նույնի, Արաբական երկրների պատմություն, հատոր առաջին, Արաբները VII դարից մինչև 1516թ., Երևան, 2003:

[5] Տե՛ս Коран. Перевод и комментарии И. Ю. Крачковского, Москва, 1986. Ղուրան: Արաբատառ բնագրին և Գազմիրսքիի Ամիրխանի և այլ հեղինակաւոր արաբագէտներու թարգմանութեանց առաջնորդութեամբ հայրենի վերածեց Յ. Գուրպէթեան, Վառնա, 1912: Կոզմոյան Ա., Ղուրանը հայոց մեջ, Երևան, 2003: Նույնի, Средневековые армянские переводы Корана в рукописьях Матенадарана, Письменные памятники Востока, 2005, с. 235-239:

[6] لامام ابو الحسن البلاذري, فتوح البلدان, مكتبة الهلال, بيروت, 1403ه-1983م

[7] تاريخ خليفة بن خياط, تحقيق الدكتور اكرم ضياء العمري, ساعدت جامعة بغداد على نشره, مؤسسة الرسالة, دمشق-بيروت, 1397ه-1977م

[8] ابن اعثام الكوفي, فتوح البلدان, حيدرابادر1968, جلد1, جلد 2, حايدرابادر, 1969

Տաբարիի[9], 10-րդ դարի պատմագիր և աշխարհագրագետ ալ-Մասուդիի[10] և 12-րդ դարի պատմիչ Իբն ալ-Ասիրի[11] աշխատությունները:

Հիշարժան է նաև Մուհամմադ Համիդալլահի կողմից խմբագրված պարսկերեն աշխատությունը[12]: Ատենախոսության մեջ որպես պատմական սկզբնաղբյուր է օգտագործել նաև Նաջրանի բնակչությանը Մուհամմադ մարգարեի կողմից տրված պայմանագրի «քրիստոնեական» տարբերակը[13]:

Թեմային աղերսվող սկզբնաղբյուրներ են ծառայել նաև հայ վաստակաշատ գիտնականներ Հ. Նալբանդյանի[14], Ա. Տեր-Ղևոնդյանի[15], Բ. Խալաթյանցի[16] մուսուլմանական աղբյուրներից քաղված նյութերի թարգմանությունները:

Մուհամմադյան պայմանագրերի ուսումնասիրության համար կարևոր աղբյուրներ են նաև հայկական միջնադարյան աղբյուրները: 8-րդ դարի պատմագիր Ղևոնդի[17], 9-11-րդ դարերի պատմագիրներ Հովհաննես Դրասխանակերտցու[18], Ստեփանոս Ասողիկ Տարոնեցու[19] աշխատությունները:

«Մեծ և Փոքր մանշուրների» մասին հիշատակում են 12-13-րդ դարերի պատ-

---

9 ابن جعفر محمد جرير الطبري (تاريخ الرسول والملوك لأبي جعفر محمد التبري 224-310) الجرء الثاني, القاهرة 1990م, دار المعارف, الجزء الثالث القاهرة, دار المعارف,م1962, الجزء الرابع, القاهرة, دار المعارف, 1977م,

10 ابو الحسن علي بن الحسين بن علي المسعودي, كتاب التنبيه والأشراف, Bibliotheca geographorum Arabicorum Tome VIII Brill, 1967 p. 508

11 الكامل في التاريخ للامام العلامة عمدة المؤرخين ابي حسن علي بن محمد ابن عبد الواحد الشيباني معروف بابن الاثير 2.46 الجزري المقلب بعز الدين المتوفى سنة 630ه, إدارة الطباعة المنيرة, الجزء الثاني, القاهرة, 1349ه- 1930م, ص. 398, الجزء الثالث, القاهرة, 1937-1938م

12 نامه ها وپيمانهاي سياسي حضرت محمد واسناد صدر اسلام, تحقيق كرداورده دكتور سيد محمد حسيني,تهران, سروش 1999م- ه1377

13 Колесников А., Две версии договора Мухаммада с христианами Наджрана, Палестинский сборник, вып. 28(91), Ленинград, 1986, с. 24-33, Histoire Nestoirenne (Chronique de Seert), seconde partie (II), Paris, 1918, p. 602-617.

14 Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ.Թ. Նալբանդյան, Երևան, 1965:

15 Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, ներածությունը և բնագրերից թարգմանությունը՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, 2005, տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 16, Արաբական աղբյուրներ, Գ (այսուհետև՝ Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր), Իբն ալ-Ասիր, Լիակատար պատմություն (Ալ-Քամիլ, Ֆի-լ-Տարիխ) թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 11, Արաբական աղբյուրներ, Բ, Երևան, 1981:

16 Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, հաւաքեց և թարգմանեց Բ. Խալաթեանց, Վիեննա, 1919:

17 Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ.Թ. Նալբանդյան, Երևան, 1965:

18 Պատմութիւն Ղեւոնդայ Մեծի վարդապէտի հայոց: Յառաջաբան՝ Կ. Եզեանց, Ի տպարանի Ի.Ն. Սկորոխոդովի, Սանկտ Պետերբուրգ, 1887: Ղևոնդ: Պատմություն: Թարգմ. ներած. և ծանոթագր. Ա. Տեր-Ղևոնդյան, Երևան, 1982:

19 Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885:

մագիրներ Սամուել Անեցին[20], Կիրակոս Գանձակեցին[21], Մխիթար Անեցին[22], 10-11-րդ դարերին վերագրվող Անանուն զրուցագրի պատմությունը[23]: Վերոհիշյալ պայմանագրերի դասակարգումն առկա է 15-րդ դարի մատենագիր Գրիգոր Տաթևացու մոտ[24]: Թեմայի ուսումնասիրության համար մեծ կարևորություն ունեն նաև Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի որոշ ձեռագրեր Կաթողիկոսական դիվանում պահվող արաբերենով, պարսկերենով և թուրքերենով գրված վավերագրերը[25]:

Մուհամմադյան պայմանագրերի կազմման հիմքում Երուսաղեմի հայկական համայնքին Մուհամմադի կողմից տրված և հետագայում Ալի իբն Աբու Տալիբի, Օմար իբն ալ-Խատտաբ խալիֆաների ու մուսուլման իշխողների կողմից հաստատված պայմանագրերն են, որոնց մասին հիշատակում են Տ. Սավալանյանը[26] և Ա. Տեր-Հովհաննեսյանցը[27]:

Ատենախոսության համար իսլամագիտական ընդհանուր տեսական հիմք են հանդիսացել ռուս ու եվրոպացի նշանավոր արևելագետների՝ Վ. Վ. Բարտոլդի, Ի. Պ. Պետրուշևսկու, Գ. Է. ֆոն Գրյունեբաումի, Ա. Մասեի, Ա. Մեցի, Ա. Կրիմսկու աշխատությունները[28]:

Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը: Ատենախոսությունը

---

20 Սամուէլ Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ներկայս ծայրաքաղ արարեալ, յառաջաբանով համեմատութեամբ, յաւելուածներով՝ Ա. Տեր Միքելեան, Ս. Էջմիածին, Վաղարշապատ, 1893:

21 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք Օհանջանյանի, Երևան, 1961:

22 Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, Երևան, 1983:

23 Պատմութիւն Անանուն զրուցագրի, կարծեցեալ Շապուհ Բագրատունի, թարգմանությունը գրաբարից, առաջաբանն ու ծանոթագրությունները՝ Մ.Հ. Դարբինյան-Մելիքյանի, Երևան, 1971:

24 Գրիգոր Տաթեւացի, Ընդդէմ տաճկաց, Երևան, 2009:

25 Կաթողիկոսական դիվան՝ թղթապանակ 1ա, վավերագիր 1, Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրեր N 2622, էջ 115 ա-116բ, N 6984, էջ 303բ-305բ, արաբատառ ձեռագրեր N 272, N 357, N 358, Կաթողիկոսական դիվան, ցուցակ 29, թղթ. 3, վավ. 130, թղթապանակ 203, վավ. 998, 999, թղթապանակ 14, վավ. 513, էջ 101-102, թղթապանակ 257, վավ. 242:

26 Սաւալանեանց Տ., Պատմութիւն Երուսաղէմի, գրաբար բնագիրէն աշխարհաբարի վերածեց Մեսրոպ եպիսկոպոս Նշանեան, առաջին հատոր, Երուսաղէմ, 1931

27 Տէր-Յովհաննեսեանց Ա., ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի, բաժանեալ յերկուս հատորս, հատոր Ա, Երուսաղէմ, 1890:

28 Տե՛ս Бартольд В. В., Работы по истории ислама и арабского халифата, Сочинения, т. 6, Москва. 1966. Петрушевский И. П., Ислам в Иране в VII-XV веках, Курс лекций, Ленинград, 1966. Грюнебаум фон Г. Э., Классический ислам.Очерк истории (600-1258), Москва, 1966. Массэ А., Ислам, очерк истории, Москва, 1982. Мец А., Мусульманский Ренессанс, Москва, 1996. Крымский А., Исторія арабовъ, ихъ халифатъ, ихъ дальнейшия судьбы, Краткий очеркъ арабской литературы, Москва, 1903.

կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործած գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ ներկայացված են ատենախոսության թեմայի ընտրության արդիականությունը, ատենախոսության գիտական նորույթը, հիմնախնդրի գիտական մշակվածությունը, հետազոտության առարկան, նպատակն ու խնդիրները, մեթոդաբանական հիմքը, հիմնավորված են ատենախոսության գիտական հավաստիությունն ապահովող գործոնները և հետազոտության ժամանակագրական շրջանակների ընտրությունը, ինչպես նաև տեսական ու կիրառական նշանակությունը:

Գլուխ առաջին. Մուհամմադ մարգարեի վերաբերմունքը քրիստոնյաների նկատմամբ:

1.1. Մուսուլման և այլակրոն բնակչության միջև հարաբերությունների ձևավորման նախադրյալները Ղուրանում: Մուհամմադ մարգարեն քրիստոնեության մասին իր տեղեկությունները քաղել է Արաբական թերակղզու քրիստոնյա և հրեա հոգևորականների հետ ունեցած կրոնական զրույցներից, որոնք մինչ քրիստոնեության ներթափանցումը Արաբական թերակղզի արդեն իսկ տարածված էին արաբական աշխարհում: Մեքքայի վերնախավի հետ կրոնական հողի վրա ունեցած իր տարաձայնությունների պատճառով Մուհամմադն իր կողմնակիցների հետ հեռանում է Յասրիբ՝ Մադինա, ուր արդեն կար հեթանոս արաբների ու քրիստոնյաների հետ համերաշխ հրեական մեծ համայնք: Պատմությունը պահպանել է Մադինայի համայնքի առաջին կանոնադրությունը: Համաձայնագրի ամբողջական տեքստը մեզ է հասել Մուհամմադի վարքագիր Իբն Հիշամի (մահ. է 834 թ.) միջոցով և զետեղված է «Աս-Սիրա ան-Նաբավիյա» («Մարգարեի վարքը») գրքում:

Ըստ Ղուրանի՝ բոլոր հավատացյալները պարտավորվում են Աստծո ճանապարհին ջանալ, և Մուհամմադը համոզված էր, որ ինքն իր հավատացյալ ժողովրդի հետ պետք է պատերազմի այն ժողովրդի դեմ, որը դրժել է իր ուխտն Աստծո հետ, ծաղրել նրա մարգարեին: Մուսուլմանները պետք է պատերազմեն նրանց դեմ, ովքեր «չեն հավատում Ալլահին ու վերջին օրվան և չեն արգելում այն, ինչ արգելել են Ալլահն ու նրա առաքյալը և չեն դավանում ճշմարտության կրոնին, մինչև որ իրենց ձեռքով չտան գլխահարկը և չնվաստացվեն»: Այս հարկը գանձվում էր միայն «Գրքի ժողովրդից» («Ահլ ալ-քիթաբ»), որը պետք է վճարեր այն՝ որպես փրկագին:

1.2. Պայմանագիրը (ահդ) վաղ իսլամական շրջանում: Վաղ իսլամին նվիրված գիտական գրականության մեջ պայմանագիրը կոչվում է «ահդ», որը թարգմանվում է որպես «ուխտ», «երդում», «կարգադրություն»: Հետագայում «պայմանագիր» նշանակությամբ սկսեցին օգտագործվել նաև «աման» (ապահովության գիր) կամ «շարտ» (պայման, պայմանագիր), «սուլհ» (հաշտության պայմանագիր) եզրույթները: Անդրադառնալով «ահդ» եզրույթին իսլամի զարգացման վաղ շրջանում՝ նշենք, որ Ղուրանում այն օգտագործվում է երկու

նշանակությամբ՝ Ալլահի ուխտը մարդկանց հետ, մարդկանց ուխտը Ալլահի առաջ՝ ամրագրված երդմամբ, և պայմանագիր հեթանոսների և անհավատների հետ: «Ամանը» ուներ ավելի ընդհանուր իմաստ. այն ունեցողը ապահովության երաշխիք էր ստանում իր անձի, ունեցվածքի, հողերի համար: Ղուրանում այս եզրույթը չկա. դրա փոխարեն գործածվում է ջիվար (հովանավորություն, պարտավորություն) եզրը: «Ամանը», ի տարբերություն «ահդի» ու «զիմմայի», ոչ մուսուլմանների, առաջին հերթին քրիստոնյաների կյանքի և գույքի ապահովությունն է՝ առանց փոխադարձ պարտավորությունների: «Սուլհը» կնքվում էր մուսուլմանների և նվաճված տարածքների բնակչության միջև:

1.3. Մուհամմադի կողմից Արաբական թերակղզու և Եմենի Նաջրան քաղաքի քրիստոնյա բնակչությանը տրված պայմանագրերը՝ որպես այլակրոնների հետ հարաբերության մոդել: Եմենում նոր կրոնի տարածման և ամրապնդման գործում մեծ դեր ունեցավ Նաջրանի քրիստոնյա բնակչության հետ Մուհամմադի կնքած պայմանագիրը: Մուհամմադի կողմից Արաբական թերակղզու քրիստոնյա, հրեա բնակչությանը տրված պայմանագրերն ունեն բացառիկ նշանակություն իսլամի հետևորդների ու նրանց կողմից նվաճված ժողովուրդների փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրության տեսակետից, քանի որ դրանք հետագայում մեծ դեր են խաղացել երկու կողմերի միջև սոցիալ-տնտեսական և քաղաքական հարաբերությունների կարգավորման գործում: Մուհամմադի կողմից Նաջրանի քրիստոնյաների հետ կնքած պայմանագրի մասին վկայում են 9-12-րդ դարերի մուսուլմանական միջնադարյան աղբյուրները՝ Իբն Սաադ, Իբն Հիշամ, Աբու Յուսուֆ, ալ-Յակուբի, ալ-Բալազուրի, Իբն ալ-Ասիր: Այդ պայմանագրի մասին հիշատակում է նաև միջնադարյան քրիստոնեական ժամանակագրության անանուն հեղինակը:

Բացի պայմանագրի այս տարբերակից՝ գոյություն ունի նաև այլ տարբերակ. այն զետեղված է անանուն «Նեստորական պատմության» մեջ, որը լույս է տեսել 20-րդ դարասկզբին: Պայմանագիրը կազմվել է հիջրայի 265 (878-879) թվականին: Պայմանագրի այս տարբերակը ծավալի, բովանդակության, կառուցվածքի ու ոճի տեսակետից էականորեն տարբերվում է մեզ հայտնի «մուսուլմանական» տարբերակից: Ի տարբերություն պայմանագրի «մուսուլմանական» տարբերակի, որը նախատեսված է միայն Նաջրան քաղաքի քրիստոնյա բնակչության համար, այստեղ Մուհամմադն Ալլահի ու իր անունից պայմանագիր է կնքում բոլոր նրանց հետ, ովքեր դավանում են քրիստոնեական կրոնը: Այն կնքվում է մուսուլմանների հաջորդ սերունդների համար ևս, որպեսզի նրանք ճանաչեն քրիստոնյաների իրավունքներն ու վերջիններիս վերցնեն իրենց հովանավորության տակ: Մուհամմադի և Նաջրանի քրիստոնյաների միջև կնքված այս երկու պայմանագրերից ավելի հավաստի է առաջինը: Նաջրանի պայմանագրի «քրիստոնեական» տարբերակի ի հայտ գալն Արաբական խալիֆայության կազմի մեջ մտնող քրիստոնյա մի շարք երկրների ազգաբնակչության բողոքի արտահայտությունն էր քրիստոնեական

եկեղեցու իրավունքներն ու շահերը ոտնահարող մուսուլմանական իշխանությունների ոտնձգությունների դեմ:

Գլուխ երկրորդ. Դաշնագրերը որպես հայ-արաբական հարաբերությունների աղբյուր

2.1. Մուհամմադի և մուսուլման իշխանավորների կողմից Երուսաղեմի հայոց համայնքին տրված դաշնագրերը: Մուհամմադյան դաշնագրերի ուսումնասիրության հարցում առանձնահատուկ է Երուսաղեմի քրիստոնյա, մասնավորապես հայկական համայնքին Մուհամմադի կողմից տրված պայմանագիրը, որը հաստատվել է Ալի իբն Աբու Տալիբի, հետագայում՝ Օմար խալիֆայի և Այյուբյան հարստության հիմնադիր Սալահ ալ-Դինի կողմից: 4-5-րդ դարերում՝ հատկապես Ս. Հակոբ եկեղեցու կառուցումից հետո, հայ վանականներն իրենց հոգևոր իշխանությունը տարածում են Պաղեստինի, Սիրիայի, Եգիպտոսի հայ ազգաբնակչության վրա: Ըստ Տ. Սավալանյանի՝ հայոց Աբրահամ պատրիարքը, տեսնելով մուսուլմանական կրոնի հաջողությունները Մուհամմադի օրոք, քրիստոնյաներից կազմված պատվիրակության հետ ժամանում է Մադինա՝ ցանկանալով նրանից ստանալ հայկական համայնքի անվտանգությունն ապահովող փաստաթուղթ: Մարգարեն ընդառաջում է նրա ցանկությանը՝ «տալով ձեռքին դրոշմը կրող հաւատարմագիր մը, վասնզի ինք անգրագէտ էր»: Երուսաղեմի հայկական համայնքին տրված Օմարի պայմանագիրը, որի իսկությունը հաստատվել է հետագա դարերի մուսուլման իշխողների կողմից, ունի պատմական և փաստական հիմք:

2.2. Հայաստանի և հարակից երկրների (Վրաստան, Աղվանք) բնակչությանը տրված պայմանագրերը: Արաբական նվաճումների շեմին Հայաստանը բաժանված էր մանր իշխանությունների, որոնք անկախության էին ձգտում: Բյուզանդական կայսրությունը, ինչպես նաև նոր կայացող Արաբական խալիֆայությունը ձգտում էին օգտագործել այս իրավիճակը՝ իրենց ազդեցությունը տարածաշրջանում ամրապնդելու համար: Թեոդորոս Ռշտունին, քաղաքական նման բարդ իրավիճակի մեջ հայտնվելով, վճռական քայլ է կատարում՝ բանակցությունների մեջ մտնելով Ասորիքի արաբ կուսակալ Մուավիայի հետ: 652 թ. երկու կողմերի միջև կնքվում է պայմանագիր: Այնուհանդերձ Մուավիան, թեև պայմանագիր էր կնքել Ռշտունու հետ, որի համաձայն Հայաստանը պահպանում էր քաղաքական ինքնուրույնությունը, որոշում է նվաճել Հայաստանը: Ըստ ալ-Բալազուրիի՝ Օսման խալիֆան հրամայում է Մուավիային Հայաստան ուղարկել Հաբիբ իբն Մասլամային: Վերջինս պաշարում է Կարնո քաղաքը (Կալիկալա), որի բնակիչները կռվի են դուրս գալիս արաբների դեմ, սակայն պարտության մատնվելով՝ երաշխավորագիր (ման) են խնդրում քաղաքից հեռանալու համար, իսկ մնալու դեպքում պարտավորվում գլխահարկ վճարել: Ըստ Հաբիբ իբն Մասլամայի կողմից Դվինի բնակչությանը տված պայմանագրի, որը տրվում էր քաղաքի քրիստոնյաներին, հրեաներին, զրադաշտականներին, ներկա և բացակա

բնակիչներին, երաշխավորվում էր նրանց անձի, ունեցվածքի, եկեղեցիների, տաճարների, քաղաքի պարիսպների անվտանգությունը:

2.3. «Մեծ Մանշուրը»: Հայկական համայնքներին տրված և Մուհամմադ մարգարեի անունով պայմանագրերը հայտնի են որպես «Մեծ Մանշուր» և «Փոքր Մանշուր»: Դրանք ավելի շատ ունեին կրոնական ուղղվածություն ու միտված էին պահպանելու հայոց եկեղեցու և հոգևոր դասի իրավունքները:

«Մեծ Մանշուրը» առաջին անգամ իր «Պատմության» մեջ հիշատակում է 12-րդ դարի պատմիչ Սամուել Անեցին: Նա համառոտակի անդրադառնում է Մուհամմադի գործունեությանը և նշում, որ Մուհամմադը ... արգել զսուրն ու բանիւ խրատու նորա հնազանդեցուցին ինքնեաց զմեծ մասն տիեզերաց: Եւ անմոռաց երդմամբ կնքեաց մուրհակ Հայոց աշխարհիս՝ համարձակ ունել զքրիստոնեութիւնն և վաճառեաց նոցա զհաւատս նոցա...»:

Վերոհիշյալ արտոնագիրը «Ալի Մանշուր» անվանելու մասին առաջին գրավոր հիշատակությունը հանդիպում է 14-15-րդ դարի մատենագիր Գ. Տաթևացու «Գիրք հարցմանցի» Այնուհետև շարադրում է պայմանագրի պայմանները՝ տրված Հայոց երկրին: Գրիգոր Տաթևացու կողմից հիշատակված պայմանագրի այս օրինակում նշվում են կոնկրետ թվականներ: Եզրի կաթողիկոսության շրջանում (630-641) Մուհամմադ մարգարեն, իրեն ենթարկելով «տիեզերքի մեծ մասը», պայմանագիր (մուրհակ) է կնքել Հայոց աշխարհի հետ, որով երկրի հոգևորականությունն ու իշխանական դասն ազատվում էին հարկերից, իսկ մնացած բնակիչները պարտավորվում էին վճարել դրանք: Հայտնի է, որ 652-ին հայոց իշխան Թ. Ռշտունին հաշտության պայմանագիր է կնքել Ասորիքի կուսակալ Մուավիայի հետ: Ակնհայտ է այն փաստը, որ 632-ին Մուհամմադ մարգարեն արդեն կնքել էր իր մահկանացուն և հետևաբար չէր կարող պայմանագիր կնքել հայերի հետ:

Ա. Տեր-Ղևոնդյանն հանգամանորեն է մոտենում այս հարցին՝ լույս սփռելով պայմանագրի ստեղծման պատմության վրա և նշելով, որ Ս. Անեցին այդ կարևոր փաստաթղթում շփոթել է Օմայան Մուհամմադ իբն Մրվան փոխարքայի անունը իսլամի հիմնադրի անվան հետ: Ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի շատ կարևոր նկատումի՝ հետագայում հայկական պատմագրության մեջ ամրագրվել է ավանդությունն այն մասին, որ իբր հենց Մուհամմադ մարգարեն է պայմանագիր կնքել հայերի հետ վերջիններիս իրավունքները ճանաչելու և քրիստոնեական կրոնը ազատորեն դավանելու մասին:

Սամուել Անեցին և վերոհիշյալ հայ միջնադարյան մատենա-գիրները, շարադրելով պայմանագրի տեքստը, չեն լուսաբանում՝ ինչ հանգամանքներում է այն տրվել Հայոց աշխարհին:

689-ին Օմայան Աբդ ալ-Մալիք խալիֆան, Բյուզանդիային վերջնականապես պարտության մատնելուց հետո լուծելով երկրի ներքին խնդիրները, իր եղբորը՝ Մուհամմադ իբն Մրվանին, նշանակում է Հայաստանի ու Ատրպատականի կառավարիչ, և վերջինս էլ 701-ին վերջնականապես գրավում է Հայաստանը:

Հավանաբար հենց այս շրջանին էլ վերաբերում է Սամուել Անեցու կողմից հիշատակված և Մուհամմադ մարգարեին վերագրված պայմանագիրը: Սույն պայմանագիրը, այսպիսով, պատմական փաստաթուղթ է՝ տրված հայերին հավանաբար Մուհամմադ իբն Մրվան փոխարքայի կողմից, և այս պայմաններով արդեն ամրագրվում էր Հայաստանի վերջնական նվաճումը արաբների կողմից:

2.4. «Փոքր Մանշուրը»: 703թ. ապստամբության արտացոլումը հայ պատմագրության մեջ: Օմայան խալիֆա Աբդ ալ-Մալիքը 693-ին Ատրպատականի, Հայաստանի և Ջազիրայի (Վերին Միջագետք) փոխարքա է նշանակում իր եղբորը՝ Մուհամմադ իբն Մրվանին, որը 701-ին գրավեց Հայաստանը: Նույն թվականին նվաճվում են նաև Վիրքը, Աղվանքը, Մերձկասպյան շրջանները: Այդ նվաճված տարածքներից 701-ին Արաբական խալիֆայությունն ստեղծում է Արմինիա վարչական միավորը՝ Դվին կենտրոնով: Այն ղեկավարվում էր արաբ իշխանավորների կողմից, որոնք հայկական աղբյուրներում հայտնի են ոստիկան անունով: 862թ. Աշոտ Բագրատունին դարձավ «իշխանաց իշխան Հայոց և Վրաց»: Իսկ արդեն 885-ին Մուտամիդ խալիֆան պաշտոնապես ճանաչեց նրան որպես հայոց թագավոր:

Կրոնական բովանդակությամբ առանձնացող մյուս արտոնագիրը հայկական մատենագրության մեջ հայտնի է «Փոքր Մանշուր» անունով: Այս մասին առաջին գրավոր հիշատակությունն առկա է 14-15-րդ դդ. մատենագիր Գ. Տաթևացու մոտ, որը գրում է, որ մյուս Մահմեդը, «պատգամաբեր փոխանակ նորին», հայերին է շնորհել պայմանագիր, որը հայերին է տրվել Մուհամմադ իբն Մրվանի կողմից, երբ Սահակ Ձորափորեցի կաթողիկոսը ընդառաջ է գնացել նրան կասեցնելու համար: Հենց այս պայմանագիրն էլ հայկական մատենագրության մեջ հայտնի է «Փոքր Մանշուր» անունով, որը, ցավոք, մեզ չի հասել:

2.5. Մուհամմադ մարգարեի և Ալի իբն Աբու Տալիբ խալիֆայի անուններով արաբատառ դաշնագրերը Մատենադարանի ձեռագիր ֆոնդերում: Մուհամմադյան դաշնագրերի օրինակներ կան Մատենադարանի պարսկերեն վավերագրերում: Այդպիսի մի ձեռագիր լուսաբանել է Հ. Փափազյանը: Այն վերաբերում է հայ հոգևորականության հարկային իմունիտետի խնդիրներին, որի վավերացումը կատարվել է 1583թ. Գրիգորիս Աղթամարցի կաթողիկոսի նախաձեռնությամբ: Հիշարժան են նաև Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պահվող պարսկերեն, արաբերեն և թուրքերեն վավերագրերի օրինակները: Հոգևորականներն ազատվում էին բոլոր հարկերից: Մատենադարանի արաբատառ ֆոնդում պահպանվող և Մուհամմադ մարգարեի անունով կազմված դաշնագրերին անդրադարձել է նաև Հ. Անասյանը:

Մատենադարանում պահվող և 2622, 2826, 6984 թվահամարները կրող ձեռագրերում զետեղված վերոհիշյալ պայմանագրերի բովանդակությունները

հիմնականում համընկնում են միմյանց:

Առանձնացրել ենք նաև Մատենադարանի արաբատառ ֆոնդի Մուհամմադ մարգարեի անունով կազմված երկու ձեռագիր: 358 թվահամարը կրող ձեռագիրը երկլեզվյա է՝ գրված արաբերեն, տողատակում՝ պարսկերեն և ընդօրինակված հավանաբար 17-րդ դարում:

Մյուս ձեռագիրը պարսկերեն է՝ ընդօրինակված հավանաբար 17-րդ դարում, ուր կրկնվում են վերոհիշյալ դաշնագրի հիմնական դրույթները: Ուսումնասիրվել են նաև Մատենադարանի՝ Ալի իբն Աբու Տալիբ խալիֆայի անունից տրված դաշնագրերը: 357 թվահամարը կրող արաբատառ ձեռագիրն ընդօրինակվել է 1694-ին: Այն մանրատառ է և շատ հաճախ անընթեռնելի: Այս ձեռագրի թարգմանության ժամանակ օգտվել ենք նաև Լ. Մինասյանի կողմից հրատարակված և Ալիի անունով կազմված պայմանագրի պարսկերեն տարբերակից, քանի որ այս երկու դաշնագրերը հիմնականում բովանդակությամբ միմյանց համընկնում են: Պայմանագրի սկզբում նշվում է, որ այն գրված է քուֆի ձեռագրով, Հիշամ Ութբա իբն Վակասի ձեռքով, Ալի իբն Աբու Տալիբի հրամանով: Ի տարբերություն նախորդ՝ 358 թվահամարը կրող արաբերեն պայմանագրի՝ այստեղ արդեն հիշատակվում է հայերի անունը, ինչպես, օրինակ, հայ հոգևորականների՝ Աբրահամ քահանայի, Եսայի եպիսկոպոսի, Աբդ ալ-Շուխի անունները: Շեշտվում է, որ այդ պայմանագիրը Ալլահի ուխտն է և ապահովությունը:

Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում է պահվում հավանաբար 16-րդ դարում կազմված արաբերեն մի վավերագիր, որը կազմված է Ալիի անունով:

2.6. Մուհամմադյան պայմանագրերը մուսուլման պատմաբանների երկերում: Մուհամմադ մարգարեի անունով քրիստոնյա համայնքներին, այդ թվում և հայերին տրված պայմանագրերը գտնվել են նաև մուսուլման հետազոտողների ուշադրության կենտրոնում: Վերոհիշյալ պայմանագրերի մի այդպիսի խումբ ներկայացրել և ուսումնասիրել է Մուհամմադ Համիդ Ալլահը: Վերջինս մասնավորապես նշում է երկու պայմանագիր, որոնցից մեկը Մուհամմադի հրահանգով գրված է Մուավիա իբն Աբու Սուֆյանի կողմից հիջրայի 4 թվականին (625-626) Մադինա քաղաքում, իսկ մյուսը Ալի իբն Աբու Տալիբի կողմից հիջրայի 2 թվականին (623-624): Հետազոտողը նշում է, որ այդ պայմանագրի ձեռագրերից մեկը Սինայի Թուր եկեղեցում է գտնվում, մյուսը՝ Զեյթունի լեռան վանականների մոտ: Պայմանագրերը լիովին համընկնում են Մուհամմադի կողմից Նաջրանի քրիստոնյա բնակչությանը տրված պայմանագրի «քրիստոնեական» տարբերակի և Մատենադարանում պահվող և հեղինակի կողմից քննարկված ու Մուհամմադ մարգարեի անունով դաշնագրերի տեքստի հետ:

2.7. Գ. Դարանաղցու ժամանակագրությունը «Ալի Մանշուրի» մասին: Գ. Դարանաղցին, որը 17-րդ դարի առաջին կեսի հեղինակ և հայտնի եկեղեցական գործիչ էր, իր գրքում խոսելով այլակրոն բնակչության նկատմամբ Օսմանյան

կայսրության կողմից գործադրվող դաժան քաղաքականության մասին, հիշատակում է վերոհիշյալ փաստաթղթի՝ «յալէ մեծ մանշուրի» մասին, որը հայ հոգևորականությունը հաճախ էր օգտագործում՝ իր և հայ համայնքի վիճակը թեթևացնելու, իրենց իրավունքները վերահաստատելու համար:

Նրա պատմության շարադրանքից պարզ է դառնում, որ նմանատիպ փաստաթղթերով հայ հոգևորականությունը փորձում էր սանձահարել մուսուլման պաշտոնյաների կամայականությունները, տանելի դարձնել ու հայ համայնքի վիճակը: Երբեմն այդ փաստաթղթերը կարողանում էին դրական ազդեցություն ունենալ նրանց վրա, ինչպես այս դեպքում, երբ տեսնելով «յալէ գիրը»՝ նրանք, ըստ հեղինակի, սոսկում էին, համբուրում այն և դադարեցնում ժողովրդի հարստահարությունները և մեղմում նրա տառապանքը:

Գլուխ երրորդ. Առաջին չորս արդարադատ խալիֆաների օրոք նվաճված երկրների ազգաբնակչությանը տրված պայմանագրերը:

3.1. Միջագետքի և Սիրիայի քաղաքներին տրված պայմանագրերը: Լուսաբանվող պայմանագրերի ուսումնասիրության գործում անգնահատելի կարևորություն ունեն Իրաքի բնակավայրերի, Հիրա քաղաքի, ինչպես նաև Սիրիայի քաղաքների, Վերին Միջագետքի (ալ-Ջազիրա) և Պաղեստինի (Երուսաղեմ) քրիստոնյա և այլակրոն բնակչությանը մուսուլման զորահրամանատարների կողմից տրված պայմանագրերը, որոնց հիմքում դրվեց «Գրքի ժողովրդի» նկատմամբ մուսուլմանական համայնքի պաշտպանության ու հովանավորության մասին դրույթը: Դրանով առաջինները ձեռք էին բերում կյանքի, դավանանքի ազատություն՝ գլխահարկ վճարելու պայմանով: Այդ դաշնագրերում առկա հիմնական պայմանները հետագայում հիմք հանդիսացան «Ալի մանշուրների» հիմնական բովանդակային կառույցի ձևավորման համար:

8-րդ դարի հայտնի իրավագետ Աբու Յուսուֆը, անդրադառնալով Խալիդ իբն ալ- Վալիդի կողմից Հիրա քաղաքի նվաճման պատմությանը, գրում է, որ քաղաքի բնակչությունը պայմանագիր է կնքում Խալիդի հետ՝ պայմանով, որ նրանց տաճարները, եկեղեցիներն ու ամրոցները չավերվեն, որ նրանց չթույլատրվի հնչեցնել (եկեղեցու) զանգը, տոն օրերին խաչը հրապարակավ դուրս հանել, որ բնակիչները սուտ ցուցմունքներ չտան: Արաբական նվաճումները մեծ թափ են ստանում երկրորդ խալիֆա Օմար իբն ալ-Խատտաբի օրոք (634-644): 634-ին վերջին Բայսանի և Ֆիհլի շրջանում սկսում է կենտրոնանալ բյուզանդական բանակը:

Դամասկոսի քրիստոնյա բնակչության հետ կնքված հաշտության պայմանագրի պայմաններն ուշարժան են, քանի որ այն հետագայում դարձավ Սիրիայի՝ արաբների կողմից նվաճված քաղաքների բնակչությանը տրված պայմանագրերի հիմնական նմուշ և օրինակ:

Աբու Յուսուֆը գրում է, որ երբ Աբու Ուբայդան մտնում է Սիրիա, նրա քաղաքների բնակչության հետ պայմանագիր է կնքում, ըստ որի՝ նրանց

եկեղեցիներն ու տաճարները անվնաս կմնան, սակայն նոր եկեղեցիներ ու տաճարներ չեն կառուցվի:

3.2. Երուսաղեմի գրավումը: Օմար խալիֆայի և քրիստոնյա բնակչության պայմանագիրը: Երկու տարվա պաշարումից հետո՝ 637-ին, արաբական զորքը գրավում է Երուսաղեմը: Իբն ալ-Քուֆին, անդրադառնալով Օմար խալիֆայի օրոք Երուսաղեմի նվաճմանը, գրում է, որ Աբու Ուբայդան ուղերձ է հղում Երուսաղեմի բնակչությանը, որ վերջիններս իսլամ ընդունեն, հակառակ դեպքում «մուսուլմանական զորքը նրանց դեմ կարշավի հրով ու սրով»: Քաղաքի բնակչությունը չի ընդունում այս պահանջը, և մուսուլմանական զորքը հարձակվում է քաղաքի վրա: Պատմիչի վկայությամբ՝ բնակիչները ծանր կորուստներ են ունենում և դիմում են Աբու Ուբայդային՝ հաշտության պայմանագիր կնքելու համար՝ խնդրելով, որ քաղաք ժամանի Օմար խալիֆան:

Երուսաղեմի բնակչությանը տրված պայմանագրի տեքստը մեզ է հասել մեկ մանրամասն և երկու համառոտ շարադրանքներով: Տեքստն առկա է հիմնականում միջնադարյան երեք պատմագիրների՝ ալ-Տաբարիի, ալ-Յակուբիի և Եվտիքիոսի երկերում:

3.3. Պայմանագիրը որպես իրավական փաստաթուղթ: Արաբական խալիֆայությունը կազմավորվում էր երկու հիմնական ձևով՝ նվաճում խաղաղ ճանապարհով՝ դաշնագրերի միջոցով, և նվաճում՝ բռնի ուժով: Վերջինս իրագործվում էր այն դեպքում, երբ տվյալ երկրի ժողովուրդն ու բանակը չէին հանձնվում բարի կամքով: Արաբական նվաճումների շրջանում լինում էին դեպքեր, երբ զենքի ուժով նվաճված քաղաքների բնակչությունն ստանում էր հովանավորյալ դասի (զիմմի) կարգավիճակ:

Արաբական նվաճումների շրջանում պայմանագրերը կնքվում էին արաբ զորահրամանատարի և նվաճված շրջանների բնակչության հետ, ի դեմս եպիսկոպոսի, քաղաքի ավագանու, պարսիկներով բնակեցված շրջաններում՝ շրջանի կառավարչի՝ դեհկանի, մոգպետի (մոբեդ) միջև: Արաբական նվաճումների առաջին շրջանում պայմանագրերը, կարելի է ասել, միակ պաշտոնական փաստաթղթերն էին, որոնք կարգավորվում էին փոխհարաբերությունները նվաճողների և նվաճված բնակչության միջև: Այդ պայմանագրերն ամրագրում էին այլակրոնների քաղաքական ենթակայության իրողությունը մուսուլմաններին և նրանց վարչական համակարգին, որոշում նվաճողների ու նվաճվածների միջև փոխադարձ պարտավորությունները, հաստատում նրանց միջև խաղաղ հարաբերություններ: Պայմանագիրը գործում էր այնքան ժամանակ, մինչև որ կողմերից մեկը խախտում էր նրա պայմանները, և այն կորցնում էր իր իրավական ուժը: Դաշնագիրը կազմվում էր ուղերձի ձևով արաբ զորահրամանատարի կողմից: Այն սկսվում էր Ղուրանից փոխառված Ալլահի փառաբանության այաթներով, նշվում էր նաև պայմանագիրը կնքողի անունը, այնուհետև շարադրվում էր պայմանագրի հիմնական տեքստը, որով նվաճված բնակչությանը առաջարկվում էր ընդունել իսլամի կրոնը կամ,

պահպանելով իրենց կրոնը, մուսուլմանական համայնքին վճարել գլխահարկ և հողահարկ:

3.4. Սասանյան Պարսկաստանի՝ քրիստոնյա և զրադաշտական բնակչությանը տրված պայմանագրերը: Մուհամմադյան դաշնագրերի կազմման համար օրինակ են հանդիսացել նաև Սասանյան Պարսկաստանի քրիստոնյա և այլակրոն բնակչությանը տրված պայմանագրերը:

Նեհավենդի շրջանի կառավարիչը՝ Դինարը, տանուլ տված մեծ ճակատամարտից հետո հանձնվեց արաբներին և խնդրեց երաշխավորագիր իր և քաղաքի բնակչության համար: Բնակիչները կարող էին իրենց օրենքներին, սովորույթներին հետևել՝ ամեն տարի մուսուլմանական կառավարչին գլխահարկ վճարելու պայմանով: Մուսուլմանական իշխանությունների և Սասանյան Պարսկաստանում բնակվող քրիստոնյա համայնքների ղեկավարների միջև առկա փոխհարաբերությունների մասին հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում քրիստոնեական աղբյուրները: Այսպես, 7-րդ դարի սիրիական ժամանակագրության անանուն հեղինակը հաղորդում է, որ կաթողիկոս Յաշոյաբ Երկրորդը, տեսնելով քրիստոնյա ազգաբնակչության ծանր վիճակը, որոշում է այցելել Օմար խալիֆային և ներկայացնել նրան քրիստոնյա համայնքի դրությունը: Օմարը նրան շնորհում է մի պահպանագիր, որի ամբողջական տեքստը շարադրում է հեղինակը: Կամքի ազատությունը դառնում էր պայմանագրերի հիմնական գաղափարը: Հենց այդ հանդուրժողականությունն էր, որ արաբներին դարեր շարունակ վեր էր բարձրացնում իրենցից հետո եկող նվաճողներից, դարձնում ժողովուրդ, որը համաշխարհային քաղաքակրթության մեջ իր մեծ դերն ունեցավ:

3.5. Օմար իբն ալ-Խատտաբ խալիֆային վերագրվող պայմանագիրը՝ տրված Ասորիքի քրիստոնյա բնակչությանը: Այս պայմանագիրը չի հիշատակվում վաղ շրջանի (միջնադարի) մուսուլմանական պատմագրության մեջ: 8-րդ դարի օրենսգետ Աբու Յուսուֆն իր «Գիրք Խարաջի» աշխատության մեջ, անդրադառնալով հովանավորյալ բնակչության կարգավիճակի ու արտաքին տեսքի մասին դրույթներին, սկզբում հայտնում է դրանց վերաբերյալ իր կարծիքը և որպեսզի մեծ կշիռ հաղորդի իր խոսքերին, վկայակոչում է Օմարին, ուր խոսք չկա Օմարի պայմանագրի մասին: Աբու Յուսուֆը տեղյակ էլ չէր այս պայմանագրի գոյությանը, հակառակ դեպքում նա կշարադրեր այս պայմանագրի դրույթները:

«Օմարի պայմանագրի» մասին հիշատակում են ուշ շրջանի մուսուլմանական աղբյուրները՝ Իբն Խալդունը (15-րդ դ.), Իբն ալ-Նակաշը (14-րդ դ.), ալ-Նուվեյրին (14-րդ դ.), ալ-Տուրտուշին (12-րդ դ.), Իբն ալ-Ասակիրը (12-րդ դ.), ալ-Սույուտին (12-րդ դ.): Այս հեղինակների աշխատություններում հիշատակված վերոհիշյալ պայմանագրի տարբերակներն այնքան նման են իրենց բովանդակությամբ, որ դրանք կարելի է դիտարկել որպես միակ և մայր օրինակից ստեղծված տարբերակներ, թեև տարբերակների հեղինակներն

ապրել են տարբեր դարաշրջաններում: Եվ Ն. Մեդնիկովը, համեմատելով այս պայմանագրի բոլոր տարբերակները՝ գրված տարբեր դարերում վերոհիշյալ հեղինակների կողմից, վերականգնել է այդ պայմանագրի տեքստը: Այս պայմանագրում առկա են քրիստոնյաների իրավունքները սահմանափակող այնպիսի դրույթներ, ինչպիսիք են չկառուցել եկեղեցիներ, ճգնավորների կացարաններ, չվերանորոգել դրանք, չխոչընդոտել մուսուլմանին՝ կանգ առնելու քրիստոնյաների եկեղեցում գիշեր թե ցերեկ, պահել քրիստոնյաների դռները բաց անցորդների և ճանապարհորդների համար և այլն:

3.6. Մուսուլմանների կողմից նվաճված ժողովուրդներին տրված պայմանագրերի և «Ալի մանշուրների» համեմատական քննություն: Մուհամմադ մարգարեի և Ալի իբն Աբու Տալիբ խալիֆայի անունով քրիստոնյա, մասնավորապես հայկական համայնքներին տրված և հայկական մատենագրության մեջ հիշատակված մանշուրներն ըստ իրենց բովանդակության կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին. «Մեծ» և «Փոքր» մանշուրները, Հ. Փափազյանի կողմից հիշատակված պայմանագիրը: Այս փաստաթղթերում տեղ են գտել 7-8-րդ դարերի հայ միջնադարյան պատմական իրողությունները՝ կապված 8-րդ դարում Սահակ Զորափորեցի կաթողիկոսի՝ Մուհամմադ ամիրայից պայմանագիր ստանալու, ինչպես նաև Սամուել Անեցու կողմից հիշատակված և 8-րդ դարի սկզբին վերաբերող պայմանագրի հետ: Մանշուրների այս խումբը հստակորեն կապված է հայ միջնադարյան պատմական իրողությունների հետ, և Սամուել Անեցու կողմից հիշատակված պայմանագրի կետերի շարադրանքը բնորոշ է այդ դարաշրջանում (8-րդ դարում) արաբ զորավարների՝ քրիստոնյա բնակչությանը տրված պայմանագրերի շարադրանքին: Երկրորդ. մանշուրների մյուս խմբի մեջ մտնում են Մատենադարանի՝ Հ. Անասյանի հետազոտած ձեռագրերը, ինչպես նաև մուսուլման պատմաբանների կողմից ուսումնասիրված և հեղինակի կողմից ներկայացված պայմանագրերը, որոնցում առկա պայմանների շարադրանքն ավելի մանրամասն է, պայմանները քրիստոնամետ են՝ ուղղված հիմնականում քրիստոնյա համայնքների շահերի պաշտպանությանը: Այս պայմանագրերն իրենց կառուցվածքով ու բովանդակությամբ նման չեն արաբ զորավարների կողմից քրիստոնյա բնակչությանը տրված պայմանագրերի բովանդակությանը: Եվ չնայած որոշ պայմանագրերի մեջ նշվում է, որ դրանք տրված են «ի ազգս քրիստոնէից կամ հայոց», նրանց մեջ առանձին կետ չկա հայերին տրված առանձնաշնորհումների, նրանց իրավունքների ու պարտականությունների մասին:

Պայմանագրերի այս խումբը ևս հատուկ հետաքրքրություն է ներկայացնում՝ ուսումնասիրելու հայ կամ քրիստոնյա և մուսուլման ազգաբնակչության միջև եղած փոխհարաբերությունների պատմությունը:

Աշխատանքում քննարկված մանշուրների բովանդակության մեջ տեղ են գտել առաջին հերթին Մուհամմադի՝ Արաբական թերակղզու քրիստոնյա և

հրեա բնակչությանը տրված դաշնագրերի պայմանները, ինչպես նաև նրա ուղերձների բովանդակությունը՝ ուղղված հարևան քրիստոնյա և ոչ քրիստոնյա պետությունների ղեկավարներին ու կառավարիչներին:

Մանշուրների հիմքում դրվում էին արաբական նվաճումների նախօրյակին կազմված և նույն թեման շոշափող դաշնագրերի պայմանները, որտեղ թվարկվում են քրիստոնյաների պարտականությունների շրջանակը, նրանց կողմից վճարվելիք հարկաչափը և այլն:

Այսպիսով, վերոհիշյալ «Ալի մանշուրների» հիմքում են դրվել նաև Սասանյան Պարսկաստանի քրիստոնյա և զրադաշտական բնակչությանը տրված պայմանագրի պայմանները ևս:

Վերոհիշյալ մանշուրների բովանդակության հիմքում կարելի է դնել նաև 7-րդ դարի սիրիական ժամանակագրության անանուն հեղինակի կողմից վկայակոչված և Օմար խալիֆայի կողմից Յաշոյաբ 2-րդ կաթողիկոսին տրված պայմանագրի պայմանները: «Ալի մանշուրների» հիմքում դրվեց նաև 652-ին Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու և Ասորիքի կուսակալ Մուավիայի միջև կնքված հաշտության պայմանագիրը՝ վկայված հայոց միջնադարյան պատմագրության մեջ:

Այսրկովկասի բնակչությանը մուսուլմանների կողմից տրված դաշնագրերի պայմանները հիմնականում համընկնում են քննարկված մանշուրների բովանդակության հետ՝ անձերի, ունեցվածքի, եկեղեցիների, վանքերի, տաճարների ապահովություն, օգնություն մուսուլմաններին, որոնց պիտի հյուրընկալեին, կերակրեին, օգնեին իրենց խորհուրդներով, բարեկամաբար վարվեին նրանց հետ, հարկեր վճարեին: Մի անգամ ևս նշենք, որ հենց այս ընդհանուր պայմաններն էին կազմում վերոհիշյալ մանշուրների կմախքը, պայմաններ, որոնք առկա են վաղ շրջանի արաբական նվաճումների ընթացքում քրիստոնյա և այլակրոն բնակչությանը տրված պայմանագրերում և օգտագործվել են հավաստիություն, պատմական իրավացիություն հաղորդելու նման մանշուրներին, որոնց մեջ Մուհամմադի ու հաջորդ խալիֆաներին ամրապնդում էր այս փաստաթղթերի պատմական հավաստիության վարկածը և անհնար դարձնում դրանց պատմական վիճարկման հարցը:

Եզրակացություններ

1. Արաբ նվաճողների փոխհարաբերությունները նվաճված երկրների քրիստոնյա և այլակրոն ժողովուրդների հետ կարգավորվում էին պայմանագիր-դաշնագրերի միջոցով, որոնք դառնում էին քաղաքական, տնտեսական, կրոնական, մշակութային, բարոյահոգեբանական հարաբերությունները ուղղորդող եղանակ՝ միաժամանակ ստանձնելով դիվանագիտական գործառույթի դեր:
2. Մուհամմադյան դաշնագրերի հիմքում դրված են ժամանակին Մուհամմադի կողմից Եմենի Նաջրան քաղաքի քրիստոնյա բնակչությանը տրված պայմանագիրը և նրա «քրիստոնեական» տարբերակը: Վերջինս իր հերթին

նմուշ հիմք է հանդիսացել հետագայում քրիստոնյաների շահերի պաշտպանության համար մարգարեի անունով շրջանառվող բազմաթիվ դաշնագրերի ստեղծման համար:
3. Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում Երուսաղեմի հայոց համայնքին Մուհամմադ մարգարեի, Ալի իբն Աբու Տալիբ, Օմար իբն ալ-Խատտաբ խալիֆաների կողմից շնորհված պայմանագրերը: Արաբական նվաճումների ընթացքում հայերին տրված բոլոր դաշնագրերը Երուսաղեմի հայոց համայնքին տրված պայմանագրի վերահաստատումներն են:
4. Սկսած 12-րդ դարից հայկական միջնադարյան մատենագրության մեջ բազմիցս հիշատակվում են «Մեծ» «Փոքր» մանշուրները (հրովարտակ, հրաման), որոնք մեծապես արտացոլում են միջնադարյան պատմական իրողությունները: «Մեծ Մանշուրը» վերագրվել է ուղղակիորեն Մուհամմադ մարգարեին, մինչդեռ այն տրվել է հայերին ավելի ուշ՝ Օմայան զորավար Մուհամմադ իբն Մրվանի կողմից: «Փոքր Մանշուրը» նույնպես տրված է Մուհամմադ իբն Մրվանի կողմից: «Մեծ Մանշուր» պայմանագրի կետերը հաստատում են Հայաստանի վերջնական նվաճման փաստը Արաբական խալիֆայության կողմից և նրան հարկատու լինելու իրողությունը:
5. Արաբական խալիֆայության տիրապետության օրոք Հայաստանի այսրկովկասյան մյուս պետություններից էթնիկական, մշակութային, տնտեսական գերակայությամբ առանձնանալու փաստը չանտեսվեց արաբների կողմից, և նրանք 701-ին կազմավորեցին նոր վարչաքաղաքական միավոր՝ Արմինիա անվամբ: Վերջինս մի յուրահատուկ առանձնաշնորհ էր հայերին, որը հետագայում նախադրյալներ ստեղծեց Հայոց անկախ պետության՝ Բագրատունյաց Հայաստանի ստեղծման համար:
6. ա) Մատենադարանի արաբատառ ձեռագիր ֆոնդում պահվող Մուհամմադ մարգարեի և Ալիի անուններով արաբերեն և պարսկերեն (272, 357, 358 և այլն) դաշնագրերի բնօրինակի որոնումները հանգցրին հետևյալին: Բոլոր նշված ձեռագրերի համար սկզբնաղբյուրը հանդիսացել է Նաջրանի պայմանագրի «քրիստոնեական» կոչվող տարբերակը:
բ) Մուսուլման պատմաբանների կողմից ուսումնասիրված քրիստոնյա այլ համայնքներին տրված մուհամմադյան պայմանագրերի հիմքում նույնպես ընկած է վերոհիշյալ տարբերակը:
7. Ժամանակի ընթացքում Մուհամմադյան դաշնագրերը դարձան հեղինակավոր ու անկասելի չափանիշ մուսուլման իշխողների կողմից հայերի նկատմամբ կայուն դիրքորոշման: Իսկ հայերի համար ծառայեցին որպես հովանավորության ու ապահով գոյության գրավական մուսուլմանական աշխարհում:
8. Դաշնագրերի ի հայտ գալը և ժամանակի ընթացքում բազմանալը մենք դիտում ենք որպես հակակշիռ և հակազդեցություն մուսուլմանական իշխանությունների կամայականությունների և ոտնձգությունների: Ամենավառ

օրինակներից մեկը մուսուլմանական պատմագրության մեջ Օմար խալիֆայի անունով պահպանված պայմանագիրն է, որը մեծապես սահմանափակում էր Սիրիայի քրիստոնյաների իրավունքները և հող նախապատրաստում մուհամմադյան դաշնագրերի համար:

9. Դաշնագրի երևույթը, ինչպես ցույց են տալիս աղբյուրները, արաբների քաղաքականության՝ նվաճված ժողովուրդների հետ հարաբերվելու կարևոր ձևերից մեկն է եղել և այն ոչ միայն աղբյուր է հայ ժողովրդի պատմական անցյալի ուսումնասիրության համար, այլև պատուհան է բացում վերլուծելու նաև Արաբական խալիֆայության քաղաքականությունը նվաճված ժողովուրդների նկատմամբ: Հետագայի համար կարևոր ենք համարում ուսումնասիրել և արժևորել նվաճված մյուս ժողովուրդներին տրված մուհամմադյան դաշնագրերը համեմատել դրանք և հնարավորինս վերականգնել Արաբական խալիֆայության քաղաքականության իրական պատկերը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Մուհամմադ մարգարեի կողմից Նաջրանի քրիստոնյա համայնքին տրված պայմանագիրը, «Արաբագիտական ուսումնասիրություններ», Բ, Երևան, 2007, էջ 106-112:
2. Օմար իբն ալ-Խատտաբ խալիֆային վերագրված և Սիրիայի քրիստոնյա բնակչության կողմից կազմված պայմանագիրը, «Արևելագիտության հարցեր», N 8, Երևան, 2013, էջ 52-63:
3. Իսլամը և հայերի անվտանգության հարցը Մուհամմադ մարգարեին և Ալի իբն Աբու Տալիբ խալիֆային վերագրված դաշնագրերում, «Վէմ» համահայկական հանդես, ապրիլ-հունիս, թիվ 2 (50), Երևան, 2015, էջ 8-26:
4. Մուհամմադ մարգարեին վերագրված և հայկական համայնքներին տրված պայմանագրերը: Փոքր Մանշուրը, «Հայագիտական հանդես», N 1 (29), Խ. Աբովյանի անվան հայկական պետ. մանկավարժական համալսարան, Երևան, 2015, էջ 117-125:
5. Մուհամմադ մարգարեին վերագրված և Հայաստանի բնակչությանը շնորհված դաշնագիրը, «Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես», Երևան, 2015, էջ 162-167:
6. Մուհամմադ մարգարեի կողմից հարևան քրիստոնյա և ոչ քրիստոնյա պետությունների ղեկավարներին տրված ուղերձները, «Արևելագիտության հարցեր», N 7, Երևան, 2012, էջ 92-101:

ГАЯНЕ СЕРГЕЕВНА МКРТУМЯН

ГРАМОТЫ-ДОГОВОРЫ КАК ИСТОЧНИК АРМЯНО-АРАБСКИХ ОТНОШЕНИЙ РАННЕГО ПЕРИОДА

Диссертация на соискание ученой степени кандидата исторической наук по специальности 07.00.05 – "Историография, источниковедение".
Защита состоится 8-го июля 2016 г. в 13:00 часов на заседании специализированного совета 006 "Всемирная история", действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4.

Резюме

Диссертация посвящена грамотам-соглашениям, предъявленным населению завоеванных Арабским Халифатом стран, посредством которых регулировались отношения мусульманских завоевателей с христианским населением. Особое внимание уделяется тем соглашениям, которые согласно армянским средневековым традициям, предъявлялись армянской и другим христианским общинам со стороны основателя ислама, Мухаммада и его последователей. Эти соглашения в нашей летописи известны как «Али Маншур» (грамота) и были нацелены на сохранение и утверждение этнических и церковных прав христианской общины.

Диссертация состоит из введения, трех глав с соответствующими подглавами, заключения, приложения и списка использованной литературы.

Во введении коротко представлены история вопроса, цели и задачи исследования, методологическая основа работы, обоснованы актуальность и научная новизна темы.

В первой главе "Отношение пророка Мухаммада к христианам", в основном исследуются две важные проблемы, первая из которых отражена в подглаве *«Предпосылки формирования взаимоотношений между мусульманским и инаковерующим населением в Коране»*, представляющей отношение пророка Мухаммада к «народу Книги» (евреи, христиане), отраженное в Коране: «народ Книги», как покровительствуемый мусульманской общиной класс (зимми), обязывался платить поголовный налог. Показано, что положение о покровительстве и терпимости мусульманской общины по отношению к инаковерующим при условии выплаты налогов последними впервые было утверждено в сурах Корана. В подглаве *"Договоры, предъявленные Мухаммадом христианскому населению Арабского полуострова и йеменского города Наджран как модель взаимоотношений с инаковерующими"* для исследования мухаммаданских соглашений в основном выделяется соглашение, предъявленное Мухаммадом христианскому населению города Наджран,

засвидетельствованное в мусульманских соглашениях 9-12 веков, которое имеет исключительное значение с точки зрения исследования взаимоотношений между последователями ислама и завоеванными ими народами. Важное значение имеет также «христианский вариант» указанного соглашения, засвидетельствованный в анонимной «Несторовской истории». Отмечается, что он по своему стилю, объему и содержанию противоречит соглашениям, предъявленным инаковерующему населению в период арабского нашествия.

Во второй главе «Грамоты как источник армяно-арабских отношений», исследуются договоры, предъявленные Мухаммадом и мусульманскими властями армянской общине Иерусалима и указывается, что именно наличие этих договоров позволило армянскому духовенству сохранить свои права по отношению к ряду святилищ. Важны также соглашения, предъявленные в период арабского нашествия населению Армении и сопредельных стран (Грузия, Алуанк), особенно грамота, заключенный в 652 году между Теодором Рштуни и губернатором Асирии Муавией, эта грамота является первым совместным армяно-арабским дипломатическим документом. В подглаве *«Большой Маншур»* анализируется грамота - соглашение, засвидетельствованный в хронологии летописца 12 века Самуела Анеци. В результате сравнительного анализа многочисленных исторических фактов выявлено, что данный документ был предъявлен армянам полководцем Мухаммадом ибн Мрваном в период арабских нашествий и указывает на окончательное завоевание Армении арабами. В подглаве *«Малый Маншур, отражение восстания 703 г. в армянской историографии»* упоминается о Малом Маншуре, который являлся соглашением, предъявленным в начале 8-го века Мухаммадом ибн Мрваном католикосу Сааку Дзорапореци. В подглаве *«Арабоязычные соглашения пророка Мухаммада и халифа Али ибн Абу Талиба в рукописных фондах Матенадарана»* большую значимость имеют документы Патриаршего корпуса Ереванского Матенадарана (рукописи № 357, 358, 272) и их армянские переводы. Все эти договоры рассматривались как в контексте сопоставления с христианским вариантом (подобно соглашению Наджрана), так и в контексте анализа соглашений, предъявленных инаковерующему населению в период арабского нашествия.

Третья глава диссертации **"Договора, предъявленные населению завоеванных стран при первых четырех праведных халифах",** в основном посвящена источниковедческому анализу договоров, предъявленных арабскими военачальниками подчиненному инаковерующему населению в период арабского нашествия. Методом сопоставления исследованы договора, предъявленные населению Междуречья, Сирии, Сасанидской Персии. В подглаве *«Договор как правовой документ»* уделяется внимание феномену соглашения, которое было призвано урегулировать взаимоотношения между

мусульманским и инаковерующим населениями, включая ряд дипломатических и социально-экономических проблем. Указывается, что эти соглашения фиксировали факт политического подчинения инаковерующих мусульманам и их административной системе, определяли взаимные обязательства между завоевателями и завоеванными. Посредством сравнительно-исторического анализа в работе выделены сходства и различия между соглашениями, предъявленными инаковерующему населению завоеванных стран, и мухаммаданскими договорами, тем более, что предъявленное Мухаммадом христианскому населению Наджрана соглашение (мусульманский и христианский варианты) выступало как прототип мухаммадских договоров и использовалось для придания этому документу исторической достоверности.

В конце диссертации представлены **выводы**, **приложение** с переводом арабской рукописи договора пророка Мухаммада и **список использованной литературы**.

GAYANE MKRTUMYAN

EDICT-TREATIES AS A SOURCE OF EARLY ARAB-ARMENIAN RELATIONSHIP

The defense of the dissertation will take place at 13:00, on 8 of July of 2016, the meeting of the Specialized Council 006 "World History" at the Institute of Oriental Studies of NAS RA. Address: 0019, Marshal Bagramyan Ave., 24/4, Yerevan.
The dissertationtted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Historical in the field of "Historiography, Source studies" 07.00.05.

Summary

The dissertation is devoted to the edict-contracts, which were addressed to the population of the countries conquered by the Arab Caliphate and regulated the relationship between the Muslim conquerors and Christian population. It mainly considers contracts, which according to the medieval Armenian historic tradition, were granted to the Armenian and other Christian communities by the founder of Islam Muhammad and his successors. In our bibliography those contracts are known as "Ali Mansur" (edict) and were tended to maintain and establish ethnic and religious rights of the Christian communities.

Dissertation consists of introduction, three chapters with their corresponding sections, conclusions, appendix and bibliography.

Introduction briefly touches upon the history of the issue, aims and problems expressed in the dissertation, as well as the methodological basis of the work. It also states the modernity and scientific novelty of the theme.

In the first chapter (**"The Attitude of Prophet Muhammad towards the Christians"**) two essential issues are mainly studied. The first one is reflected in *subsection* (*"Preconditions for the Formation of Relationships Between the Muslim and the Heterodox Population in Koran"*) and presents the attitude of prophet Muhammad towards "The Book's People" (Jews, Christians) that is expressed in Koran: "The Book's People" was a class favoured by the Muslim community and, as such, was due to pay poll tax. It is pointed out that for the first time in the surahs of Koran was enshrined the provision of patronage and tolerance towards heterodoxies exercised by the Muslim community on condition that the formers paid taxes. Subsection "Treaties *Given by Muhammad to the Christian Population of the City Najran in Yemen on Arabian Peninsula as a Model of Relationship with the Heterodoxies*") pays attention to the study of the Muhammad treaties and chiefly emphasizes the contract given by Muhammad to the Christian population of the city Najran which is cited in the 9-12 century Muslim historiography and has exceptional meaning for the study of history of the relationship between the followers of Islam and the people conquered by them. It also highlighted the "Christian" version of the above mentioned contract which is cited in the anonymous "Nestorian History". It is pointed out that by its style, volume and plot this contract differs from the ones given to the heterodox population during Arab conquests.

In the second chapter (**"Treaties as the Source of Armenian-Arab Relationship"**) are first of all, studied treaties given to the Armenian community in Jerusalem by Muhammad and Muslim authorities. It is pointed out that the very existence of those treaties has made it possible for the Armenian clergymen to maintain their inalienable rights concerning a range of sanctuaries in the city. It also signifies the treaties given to the population of Armenia and nearby countries (Georgia, Aghuanq) during Arab conquests, especially the treaty signed in 652 between Theodore Rshtuni and deputy vice-regent of Assyria Muavia, which is the first Armenian-Arab joint diplomatic document cited in Armenian historiography. *Subsection "The Great Manshur"* emphasizes the existence of this edict-contract, which is cited in the chronology of the 12th century historian Samvel Anetsi. Through the analysis and comparative study of the numerous facts it turned out that this document was given to the Armenians during the Arab conquests by the commander Muhammad ibn Mervan and points out the final conquest of Armenia by the Arabs. *Subsection "The Small Manshur", the Reflection of 703 Rebellion in Armenian Historiography* touches upon "The Small Manshur", which is a treaty given to patriarch

Sahak Dzoraporetsi by Muhammad ibn Mervan in the 8th century. *Subsection "The Arabic Treaties in the Name of Prophet Muhammad and Caliph Ali ibn Abu Talib in Matenadaran Manuscript Funds"* signifies the ratifications (manuscripts № 357, 358, 272) kept in the Patriarchal archives of Matenadaran in Yerevan and their Armenian translations. The observation of provisions jotted down in all those treaties is presented in the comparative context of Najran contract's "Christian" version, as well as on the basis of the analysis of the contracts that were given to heterodox population during Arab conquests.

The final, i.e., **third chapter** (**"Treaties Given to the Population of the Countries Conquered under the Rule of the First Equitable Caliphs"**) is mainly devoted to the analysis of the source study carried out on contracts given to the subject heterodox population during the Arab conquests. The contracts given to the population of Mesopotamia, Syria and Sassanid Persia are studied by comparative method. *Subsection "Contract as a Legal Document"* refers to the phenomenon of contract which was due to regulate the relationship between the Muslim and heterodox population including a set of diplomatic and social-economic issues. It is pointed out that those contracts enshrined the fact of political subjection of the heterodoxies to the Muslims and their administrative system, made decisions on mutual responsibilities between the conquerors and the conquered for studying the Muhammad treaties. The work emphasizes the similarities and differences between the Muhammad treaties and contracts given to the heterodox population of the countries conquered by the Arabs by using the historical-comparative analysis: it particularly emphasizes the fact that the "Muslim" and "Christian" versions of contracts given by Muhammad to the population of Najran were the sketches for the Muhammad treaties and were used for giving the air of historical justice to those documents.

In the end of the dissertation the author presents the **conclusions,** "The treaty of Prophet Muhammad", the **appendix** of the translation of the Arabic manuscript and **bibliography.**